1000 խոշոր հարկատուների կողմից 2021թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2021թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է շուրջ 1.2 տրլն դրամ, ինչը մոտ 12%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (գծապատկեր 1): Հարկ է նկատել, որ 1000 հարկատուների ցանկում 2021-ին ներառվել են ոչ միայն տնտեսվարող սուբյեկտները, այլ նաև պետական կառավարչական հիմնարկները, այդ թվում՝ նախարարությունները, այլ գերատեսչություններ: Նույն կերպ կազմված է նաև 2020-ի տարեկան ցանկը, ուստի համադրելիությունն ապահովելու նպատակով 2020-ին նախորդող տարիների համապատասխան ժամանակահատվածը չի դիտարկվել:



Գծապատկեր 1. Հունվար-դեկտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 խոշոր հարկատուներին էր բաժին ընկնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների շուրջ 74%: Հարկ է նշել, որ մեթոդաբանության փոփոխության արդյունքում, որի արդյունքում 2020 և 2021թթ 1000 խոշորներում ներառված նաև պետական կառույցները, այդ մասնաբաժինը ավելացել է կազմելով շուրջ 79%:

	2018	2019	2020	2021
1000 խոշոր հարկատուների կողմից վճարված հարկերի հանրագումարը, մլրդ դրամ	939.2	1061	1077	1206.8
ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտները, մլրդ դրամ	1268.4	1439.8	1348	1520.0
1000 խոշոր հարկատուների մասնաբաժինը	74%	73.7%	79.9%	79.4%

2021թ., նախորդ տարվա համեմատությամբ, որոշ փոփոխություններ է կրել 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը: Այսպես, 2021-ի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 287 մլրդ դրամ հարկ, ինչը մի փոքր ավելի է նախորդ տարվա համեմատությամբ (գծապատկեր 2): 100 խոշորագույն հարկատուների պարագայում նախորդ տարվա համեմատությամբ ավելացումն ավելի ակնառու է. 2021թ. արդյունքներով 100 առավել խոշոր հարկատուները վճարել են 690 մլրդ դրամի հարկ, ինչը 52 մլրդ դրամով ավելի է նախորդ տարվա համեմատությամբ:



Գծապատկեր 2. Հունվար-դեկտեմբեր ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

Որոշակի ավելացում է արձանագրել 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը: Այսպես, ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2021թ. 12 ամիսներին կազմել են 21,7 մլրդ դրամ՝ 2020-ի 18,6 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2021թ. համար կազմել է 32 անգամ, նախորդ տարի՝ 34 անգամ: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2021-ին 137 անգամ է, ինչը ևս ավելի փոքր է, քան նախորդ տարում գրանցված հարաբերակցությունը (գծապատկեր 4): Սա կարող է վկայել 1000 հարկատուների ցանկում ստորին հորիզոնականներ զբաղեցնող ընկերությունների տնտեսական ակտիվության առաջանցիկ վերականգնման մասին:



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2021թ. հունվար-դեկտեմբեր ամիսների արդյունքներով ՀՀ-ում գործող 35 ընկերություն և կազմակերպություն վճարել է 5 մլրդ դրամից ավելի հարկեր: 2020-ին այդպիսի հարկատուների թիվը 27 էր: Նույն կերպ, 2021-ի ամիսների արդյունքներով, 218 ընկերության և կազմակերպության հարկային վճարումների գումարը գերազանցել է 1 մլրդ դրամը: Նախորդ տարվա համար այդպիսի հարկատուների թիվը 191 էր:



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

Մյուս կողմից, 1000 խոշոր հարկատուների ցանկում 2021-ի տարեկան արդյունքներով տեղ է գտել 166 ընկերություն և կազմակերպություն, որոնց հարկային վճարումների ընդհանուր մեծությունը պակաս է ¼ մլրդ դրամից: Համեմատության համար արձանագրենք, որ 2020-ին այդպիսի հարկատուների թիվը ավելի շատ էր՝ 282: (գծ. 5): Ավելին, 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2021թ. պետք էր վճարել առնվազն 205 մլն դրամի հարկ, 2020-ին՝ 176 մլն դրամ:

2021-ի հունվար-դեկտեմբերի ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 18 ընկերություն վճարելի է 1 մլրդ դրամը գերազանցող շահութահարկ: Նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 20 էր: Մյուս կողմից, 234 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 217 էր (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի մեծության

2021թ. արդյունքներով 56 ընկերություն և կազմակերպություն վճարել է 1 մլրդ դրամը գերազանցող եկամտային հարկ: Նախորդ տարի այդպիսի հարկատուների թիվը 59 էր: 100 մլն դրամը գերազանցող եկամտային հարկ է վճարել 444 սուբյեկտ, 2020-ին այդպիսի կազմակերպությունների թիվը 27-ով պակաս էր (գծապատկեր 7):



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի նվազումը: 2021թ. արդյունքներով 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 34,1%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 36,3% էր (գծապատկեր 8):

1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 32,6%-ը ուղղակի հարկերն են՝ նախորդ տարվա համեմատությամբ 1,7 տոկոսային կետով պակաս: Ըստ էության, հարկ է արձանագրել խոշոր հարկ վճարողների հարկային բեռի կառուցվածքում ուղղակի հարկատեսակների մասնաբաժնի կրճատման հանգամանքը:



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2021թ. արդյունքներով, 74 հարկատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 1 մլրդ դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 56 էր:

2021թ. քառորդ մլրդ դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 313 կազմակերպություններ, 2020-ին հանրապետությունում գործել է 224 այդպիսի կազմակերպություն (գծապատկեր 9):



Գծապատկեր 9. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2021թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը որոշակիորեն տարբերվում է նախորդ տարիների պատկերից:

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2021թ. վճարել է 6,9 մլրդ դրամի հարկ (2020-ին՝ 6,4 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 706 մլն դրամ (2020-ին՝ 729 մլն դրամ), եկամտային հարկը՝ 1.55 մլրդ դրամ (2020-ին՝ 1,46 մլրդ դրամ), ԱԱՀ-ն՝ 2,7 մլրդ դրամ (2020-ին՝ 2,4 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 807 մլն դրամ (2020-ին՝ 972 մլն դրամ):

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2021թ. վճարել է 217 մլն դրամի հարկ (2020-ին՝ 186 մլն դրամ), շահութահարկը՝ 19 մլն դրամ (2020-ին՝ 23 մլն դրամ), եկամտային հարկը՝ 56 մլն դրամ (2020-ին՝ 42 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 104 մլն դրամ (2020-ին՝ 98 մլն դրամ):

Աղյուսակ 1-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրյակում տեղ զբաղեցրած առևտրային կազմակերպությունների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2020-2021թթ. ընթացքում: Ընտրված մոտ 90 կազմակերպություններից 36-ը նախորդ տարվա համեմատությամբ վճարել է 1 մլրդ դրամով ավելի հարկ, 27-ի

պարագայում հարկային վճարումների չափը ավելացել է մինչև 1 մլրդ դրամով: Աճի առումով առաջատարներն են ՛«ԹԵՂՈՒՏ»-ը (8,2 մլրդ դրամ), ՛«ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱԸ»-ը (5,8 մլրդ դրամ), ՛«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ»-ը (4,8 մլրդ դրամ), ՛«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ»-ն (4,0 մլրդ դրամ), ՛«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»-ը (4,0 մլրդ դրամ), ԱՄԵՐԻԱԲԱՆԿ-ը (3,1 մլրդ դրամ), ՛«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»-ը (2,8 մլրդ դրամ), ՛«ՅՈՒՔՈՄ»-ը (2,6 մլրդ դրամ), ՛«ԱԹԵՆՔ»-ը (2,3 մլրդ դրամ), ՛«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ»-ը (2,0 մլրդ դրամ)

20 տնտեսվարող սուբյեկտի պարագայում հարկային վճարումների կրճատում է արձանագրվել, որոնցից 8-ի դեպքում՝ ավելի քան 1 մլրդ դրամով: Վճարած հարկերի առավել մեծ նվազում են գրանցել «ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»-ն (-7,6 մլրդ դրամ), ՛«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ»-ը (-6,1 մլրդ դրամ), ՛«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»-ն (-6,0 մլրդ դրամ), ՛«ԱԴԱՄԻՈՒՄ»-ը (-4,0 մլրդ դրամ):

Աղյուսակ 1. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մլրդ դրամներով

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2020	2021	Տարբերությունը
1	«ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	43	48.8	5.8
2	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	45.6	47.8	2.2
4	«ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»	49.8	42.2	-7.6
5	«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ»	26.9	20.8	-6.1
6	«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ»	18.3	20.2	1.9
7	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ»	18.1	18.1	0.0
8	«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»	12.9	15.7	2.8
9	«ՖԼԵՇ»	16	15.5	-0.5
10	«ԹԵՂՈՒՏ»	7.1	15.3	8.2
11	«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ»	14.7	13.2	-1.5
12	«ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	15.6	12.9	-2.7
13	«ՅՈՒՔՈՄ»	8.3	10.9	2.6
14	«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ»	8.5	10.5	2.0
16	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»	10.8	8.9	-1.9
17	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	5.8	8.9	3.1
18	«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ»	3.4	8.2	4.8
19	«ՍԻԹԻ»	7.8	8.1	0.3
20	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	13.5	7.5	-6.0
21	«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ»	5.4	7.0	1.6
22	«ԱՎԵՐՍ»	7.3	6.5	-0.8
23	«ՉԱԱՐԱՏ ԿԱՊԱՆ»	4.7	6.4	1.7
24	«ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ»	4.8	6.0	1.2
25	«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ»	4.7	5.8	1.1

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2020	2021	Տարբերությունը
26	«ԲԱՂՐԱՄՅԱՆ»	6.2	5.7	-0.5
27	ԱԿԲԱ ԲԱՆԿ	5.5	5.6	0.1
28	«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»	2.4	5.6	3.2
29	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՏՐԱՆՍԳԱԶ»	5.6	5.5	-0.1
30	«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ»	5.1	5.3	0.2
32	«ԱԹԵՆՔ»	3	5.3	2.3
33	ԻՆԵԿՈԲԱՆԿ	3.5	5.3	1.8
35	«ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ»	4.1	5.0	0.9
36	«ՎԵՈԼԻԱ ՁՈՒՐ»	4.8	4.8	0.0
37	ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ	5	4.8	-0.2
38	«ԲԱՐՍԻՍ»	4.4	4.8	0.4
39	«ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ»	4.7	4.7	0.0
40	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	4.8	4.5	-0.3
42	«ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»	4.4	4.4	0.0
43	«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ»	3.2	4.4	1.2
44	«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ»	0.3	4.3	4.0
46	«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ»	4.2	4.2	0.0
47	«ՍԱՍ-ԳՐՈՒՊ»	3.9	4.1	0.2
48	ՎԱԳԱ-ՖԱՐՄ	3.4	4.0	0.6
49	«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ»	2.9	4.0	1.1
50	«ԿԱԲԱՐԿՈ»	1.7	4.0	2.3
51	«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	4.75	4.0	-0.8
52	«ԴԻՋԻԹԵՅՆ»	2.7	4.0	1.3
53	«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ»	2.8	3.9	1.1
54	«ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ»	4	3.9	-0.1
55	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ»	3.2	3.9	0.7
56	«ՍԼԱՎ ԳՐՈՒՊ»	3.1	3.9	0.8
57	«ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	3.3	3.9	0.6
58	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ»	3.2	3.9	0.7
59	«ԱԴԱՄԻՈՒՄ»	7.8	3.8	-4.0
60	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	2.8	3.8	1.0
61	«ԴԻՍԹՐԻՄԷՔՍ»	3.6	3.8	0.2
62	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	4	3.7	-0.3
63	«ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	2.6	3.7	1.1
64	«ԱՆԴԱԿՈ»	1.8	3.6	1.8
65	«ԱԳ ԻՄՊԵՔՍ»	2.4	3.6	1.2
66	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	2.8	3.6	0.8
67	«ՑԵՊԵԼԻՆ ԱՐՄԵՆԻԱ»	2.4	3.6	1.2
68	«ԼԻՄՈՆ ԳՐՈՒՊ»	1.7	3.6	1.9
69	«ԱՐՊԱՆԻՎ»	2.7	3.5	0.8
70	«ԱՌԳԵ ԲԻԶՆԵՍ»	3.4	3.4	0.0
71	«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ»	2	3.2	1.2
72	«ԴԵՐԺԱՎԱ-Ս»	2.7	3.1	0.4

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2020	2021	Տարբերությունը
74	«ԱՐՄԵՆ-ՀԱՄԻԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՀՁ»	2	3.0	1.0
75	ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	3.5	3.0	-0.5
76	«ԼԻԱ-Կ ԳՐՈՒՊ»	2.2	3.0	0.8
77	«ՊԻԿՍԱՐՏ»	1.7	2.8	1.1
78	«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ»	2.2	2.7	0.5
80	«ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ»	2.2	2.7	0.5
82	«ԲՐԱՅԹ ԱՅԴԻԱՍ»	0.6	2.6	2.0
83	«ԱԺԴԱՆԱԿ»	2.7	2.6	-0.1
84	Այդի Բանկ	1.3	2.6	1.3
85	«ՎԻԿԱԼԿ»	1.3	2.5	1.2
86	«ՀԱՅՓՈՍՏ»	1.8	2.5	0.7
87	«Ա.Ա.Բ.ՊՐՈԵԿՏ»	1.3	2.5	1.2
88	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	3.7	2.5	-1.2
89	«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ»	2.3	2.5	0.2
90	«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ»	2.7	2.5	-0.2
91	«ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ»	1.7	2.4	0.7
92	«ԷԼՔՈՐ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ»	1.7	2.4	0.7
94	«ՍՊՍ ՍԻԳԱՐՈՆ»	2.2	2.3	0.1
95	«ՄԻԳ ՏԵԽՍՊԱՍԱՐԿՈՒՄ»	0.6	2.3	1.7
96	«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ»	1.8	2.3	0.5
98	«ՊՈՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ»	2.2	2.3	0.1
99	«ՍՊԱՅԿԱ»	2	2.2	0.2
100	«ԳՅՈՒՄՐԻ-ԳԱՐԵՋՈՒՐ»	2.1	2.2	0.1

Ամփոփում

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2021թ. հունվար-դեկտեմբեր ամիսների արդյունքներով որոշակի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է ավելի քան 1,2 տրլն դրամ, ինչը 12%-ով կամ մոտ 130 մլրդ դրամով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից,
- ✓ Ընդհանուր հարկային եկամուտների մեջ 1000 խոշոր հարկատուների մասնաբաժինը կազմել է շուրջ 79%,
- ✓ 100 խոշորագույն հարկատուների կողմից վճարվել է 690 մլրդ դրամի հարկ, որը 52 մլրդ դրամով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից,

- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված 100 ամենափոքր ընկերությունները 2021-ին վճարել են 21,7 մլրդ դրամ կամ նախորդ տարվա համեմատությամբ՝ 17%-ով ավելի,
- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված ընկերությունների վճարած հարկերի անհամաչափության աստիճանի որոշակի նվազում է արձանագրվել: Ցանկի ամենախոշոր և ամենափոքր 10 ընկերությունների վճարած հարկերի ընդհանուր մեծության հարաբերակցությունը 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 137 անգամ, նախորդ տարվա 158 անգամի համեմատությամբ: Ամենախոշոր և ամենափոքր 100 ընկերությունների պարագայում նույն հարաբերակցությունը 2021-ին կազմել է 32, ինչը ևս ցածր է նախորդ տարիների մակարդակից,
- ✓ Խոշոր հարկատուների տարածքային բաշխվածությունը գրեթե չի փոխվել: Այսպես, 1000 խոշոր հարկատուների ցանկի սուբյեկտների 71%-ը գրանցված է Երևանում (նախորդ տարվա համեմատությամբ այդ թիվը չի փոխվել): Նրանց բաժին է ընկնում ընդամենը հարկային մուտքերի 66%-ը (2020-ին՝ 65%), շահութահարկի 75%-ը (նախորդ տարի՝ 72%), եկամտային հարկի 72%-ը (նախորդ տարի՝ 74,8%):
- ✓ 2021թ. արդյունքներով՝
  - ՀՀ-ում գործել է 5 մլրդ դրամից ավելի հարկեր վճարած 35 սուբյեկտ, նախորդ տարի՝ 27,
  - 1 մլրդ դրամից ավելի հարկեր վճարած ընկերությունների և գերատեսչությունների թիվը 218 է (2020-ին՝ 191),
  - 1000 խոշոր հարկատուների ցանկում կան 250 մլն դրամից պակաս հարկ վճարած 166 ընկերություններ (2020-ին այդպիսիք ավելի շատ էին՝ 282),
  - 234 ընկերության վճարած շահութահարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը (2020-ին կար 217 այդպիսի ընկերություն):
  - 444 հարկատու գերազանցել է եկամտային հարկի՝ 100 մլն դրամի շեմը (2020-ին՝ 417),
  - ուղղակի հարկերի տեսակարար կշիռը 1000 հարկատուների ցանկում ներառված սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի կառուցվածքում կազմել է 34,1% (2020-ին՝36,3%),
  - 250 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 313 սուբյեկտներ (2020-ին՝ 224):

- ✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2021թ. վճարել է 6,9 մլրդ դրամի հարկ (2020-ին՝ 6,4 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 706 մլն դրամ (2020-ին՝ 729 մլն դրամ), եկամտային հարկը՝ 1.55 մլրդ դրամ (2020-ին՝ 1,46 մլրդ դրամ), ԱԱՀ-ն՝ 2,7 մլրդ դրամ (2020-ին՝ 2,4 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 807 մլն դրամ (2020-ին՝ 972 մլն դրամ):
- ✓ Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2021թ. վճարել է 217 մլն դրամի հարկ (2020-ին՝ 186 մլն դրամ), շահութահարկը՝ 19 մլն դրամ (2020-ին՝ 23 մլն դրամ), եկամտային հարկը՝ 56 մլն դրամ (2020-ին՝ 42 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 104 մլն դրամ (2020-ին՝ 98 մլն դրամ):
- ✓ 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրյակում տեղ զբաղեցրած մոտ 90 առևտրային կազմակերպություններից 36-ը նախորդ տարվա համեմատությամբ վճարել է 1 մլրդ դրամով ավելի հարկ, 27-ի պարագայում հարկային վճարումների չափը ավելացել է մինչև 1 մլրդ դրամով: Աճի առումով առաջատարներն են ՛«ԹԵՂՈՒՏ»-ը (8,2 մլրդ դրամ), ՛«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱԸ»-ը (5,8 մլրդ դրամ), ՛«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ»-ը (4,8 մլրդ դրամ), ՛«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ»-ն (4,0 մլրդ դրամ), ՛«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»-ը (4,0 մլրդ դրամ), ԱՄԵՐԻԱԲԱՆԿ-ը (3,1 մլրդ դրամ), ՛«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»-ը (2,8 մլրդ դրամ), ՛«ՅՈՒՔՈՄ»-ը (2,6 մլրդ դրամ), ՛«ԱԹԵՆՔ»-ը (2,3 մլրդ դրամ), ՛«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ»-ը (2,0 մլրդ դրամ)
- ✓ 20 տնտեսվարող սուբյեկտի պարագայում հարկային վճարումների կրճատում է արձանագրվել, որոնցից 8-ի դեպքում՝ ավելի քան 1 մլրդ դրամով: Վճարած հարկերի առավել մեծ նվազում են գրանցել «ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»-ն (-7,6 մլրդ դրամ), ՛«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ»-ը (-6,1 մլրդ դրամ), ՛«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»-ն (-6,0 մլրդ դրամ), ՛«ԱԴԱՄԻՈՒՄ»-ը (-4,0 մլրդ դրամ)